Զորագլուխ

Մակերես՝ 13.25կմ^2

Բնակչություն՝ 366

Գյուղ Ապարանի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 39 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գյուլաբ, Գյուլաբլու, Գյուլացեց, Գուբեթլու, Գուլավտի, Կյուլափլու անվանումները: Զորագլուխ է վերանվանվել 1946 ք-ին:

Գյուղից արեւելք գտնվում է 10-12-րդ դարերի ս.Հովհաննես եկեղեցին, որ կոչում են նաեւ Կարմիր վանք:
Գյուղն ընկած է Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերին, Քասաղ գետի վերին հոսանքում: Ծովի մակարդակից գտնվում է 2025 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են: Շրջակայքը կանաչապատ է: Ունի հանքային աղբյուրներ:
1897 թ-ին ունեցել է 703, 1926 թ-ին՝ 771, 1939 թ-ին՝ 796, 1959 թ-ին՝ 459, 1979 թ-ին՝ 356 բնակիչ: Գյուղի բնակչության թիվը կազմում է 376 մարդ : Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 51%, կանայք՝ 49%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 26%, աշխատունակ ները՝ 55%, հետաշխատունակները՝ 19%: Գյուղն ունի առկա 80 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես արոտավայրեր, վարելահողեր: Քաղաքացիների սեփականությունը կազմում է համայնքի տարածքի մոտ 21%: Պահուստային հողերից արոտավայրերը զբաղեցնում են 315 հա, մոտ 53 հա՝ վարելահողեր: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբոստանային, կերային, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ:
Արդյունաբերություն չունի:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: